ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ-ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱԳԱՅԻՆ ՄԻՏՎԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Զեկուցում՝ *Մայր Աթոռ Ս. Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանում 2014 թ. հոկտեմբերի 6-ին կայացած հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովում*

ԳԱԳԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի պրոֆեսոր, գիտությունների դոկտոր

Գրադարանները բոլոր ազգերի, այդ թվում հայերի հոգևոր կյանքի և մշակույթի զարգացման պատմության մեջ կատարել ու այսօր էլ կատարում են անփոխարինելի դեր: Այդ են վկայում հազարամյակներով գոյատևած հայկական ձեռագիր գրքերը և ավելի քան 500-ամյա հայ տպագիր մշակույթը: Եվ յուրաքանչյուր տեսակի գրադարան կոչված է իրականացնելու իրեն առանձնահատուկ գործառույթներ՝ պատմամշակութային, տեղեկատվական-հաղորդակցական, լուսավորչական, տեխնոլոգիական, հետազոտական, մանկավարժական, վիճակագրական, սպասարկման և այլն:

Այդ համատեքստում և Մայր Աթոռում ու Երևանում ընթացող «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով գրադարանների միջազգային երրորդ համաժողովի կարևորմամբ՝ չափազանց մեծ են հայկական գրադարանների և մատենադարանների նորդարյա դերն ու նշանակությունը, որոնց գրքային («փաստաթղթային») հարուստ ֆոնդերի և եզակի հավաքածուների բազմազանությունը, տեղեկատվական օբյեկտների պահպանումն ու օգտագործումը օբյեկտիվորեն կապված են երկրի տնտեսության, հաղորդակցության, քաղաքականության, գիտատեխնիկական և մշակութային զարգացումների հետ:

Արդի գրադարանագիտության, մատենագիտության և գրքագիտության խնդիրն է՝ բարձրագույն կրթությամբ համապատասխան մասնագետներ պատրաստելու նպատակով խթանել գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական համակարգերի ու նրանց գործունեության ավելի կատարելագործմանը, հասարակական-տեղեկատվական պահանջների բավարարմանը, գրքի և գրադարանների ճանաչողական դերի բարձրացմանը

Հայաստանում, Արցախում և հայկական սփյուռքում: Այս խնդիրն ունի ռազմավարական և տեսամեթոդական գլոբալ նշանակություն, որոնց լուծման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է հաշվի առնել.

. Գրադարանի՝ որպես սոցիալական ինստիտուտի, ընթերցողների և փաստաթղթային (գրքային) ռեսուրսների միջև հարաբերության որոշումը: Դրանցից բխող ընթերցողական պահանջների սոցիոլոգիական ուսումնասիրումն ու հետազոտական արդյունքների արդյունավետ կիրառումը պրակտիկայում: Այսպիսի գործունեության ծավալումը մի կողմից կարող է հստակություն մտցնել փաստաթղթատեղեկատվական աղբյուրների ձեռքբերման, մյուս կողմից՝ գիրք-գրադարան-ընթերցող կապերի ակտիվացման ու գրադարանային-տեղեկատվական գործը ավելի արդյունավետ դարձնելու առումներով:

. Որպեսզի Հայաստանի, Արցախի և հայկական սփյուռքի միջև ստեղծվի տեղեկատվական-հաղորդակցական ճկուն միջավայր, անհրաժեշտ է գրադարանային, մատենադարանային, ինչպես նաև արխիվային և թանգարանային ֆոնդերի շարունակական համալրում, գրահրատարակչության և մատենագիտության զարգացում, գրադարանային-տեխնոլոգիական սպասարկում: Այստեղ, հատկապես *հետադարձ* մատենագիտության զարգացման գործնական ոլորտում, տեղին է ընդգծել Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի և Հայաստանի ազգային գրադարանի առաջատար դերը՝ XX դ. երկրորդ կեսին և XXI դ. առաջին տասնամյակում հայ ձեռագիր և տպագիր գրքերին նվիրված բազմահատոր մատենագիտություններ կազմելու և հրատարակելու ազգանվեր գործում: Իսկ տպագիր արտադրանքի հաշվառման – գրանցային և *ընթացիկ* մատենագիտության զարգացման տեսանկյունից անփոխարինելի է Հայաստանի ազգային գրապալատի դերը:

. Համաշխարհային քաղաքակրթության արժեքներից օգտվելու նպատակով միջմշակութային ու սոցիալ-հաղորդակցական փոխադարձ կապեր հաստատելու և ապագային միտված տեղեկատվական աղբյուրների միասնական համակարգ ստեղծելու պայմաններում ձգտել պահպանել *ազգայինը*: Այս խնդիրը ներկա դարաշրջանի իրադարձություններով պայմանավորված ունի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական նշանակություն:

. Անվիճելի է, որ ժամանակակից գրադարանային-մատենագիտական գործում կարևոր տեղ է հատկացվում տեխնոլոգիական միջոցների զարգացմանը՝ համակարգչայնացմանը, որպես գրադարանի նյութատեխնիկական բազայի բաղկացուցիչ մասի: Սակայն չպետք է մոռանալ, որ գիտակրթական կյանքի և տեղեկատվական հասարակարգի զարգացման մեջ լայնածավալ տեղ ունի նաև հումանիտար մտքի տարածումը՝ *հասարակության հումանիտարացումը*: Հետևապես պետք է գիտակցել, որ խոսքը գնում է գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական գործի երկկողմանի՝ հումանիտար և տեխնոլոգիական զարգացումների մասին: Ավելի լայն իմաստով՝ «թվայնացված գիրքը» չի սահմանափակում տեղեկատվական այլ աղբյուրներից օգտվելու ընթերցողի սահմանադրական իրավունքը, չի խոչընդոտում գրադարանային-մատենագիտական գործառույթների իրականացմանը, բանավոր և գրավոր հաղորդակցությանը:

. XXI դարի խնդրահարույց հարցերից մեկն էլ՝ գրքային (փաստաթղթային) ռեսուրսների և սոցիալական անվտանգության ապահովումն է, մշակութային ժառանգության և հեղինակային իրավունքի պահպանումը, տեղեկատվական և տեխնոլոգիական հանցագործությունների դեմ պայքարելը, ինչպես Հայաստանում, այնպես էլ արտասահմանում, ներառյալ հայկական սփյուռքում: Այս գործում մեծ են ոչ միայն գրադարանային-տեղեկատվական կենտրոնների դերը, այլև՝ մասնագետների խստապահանջ ուշադրությունը՝ հրավիրելու գրավոր աղբյուրների մատենագիտական նկարագրման ու հղումների կարգին, որոնք գիտական ուսումնասիրություններում և պարբերական հրատարակություններում (ներառյալ էլեկտրոնային ձևերում) մատնված են բացահայտ անորոշության:

. Ցանկացած գրադարանի գլխավոր նպատակներից մեկը՝ գործունեության արդյունավետության բարձրացումն է, որին ձգտելու և իրենց իրավունքներն ու պարտականությունները ճիշտ ճանաչելու համար, գրադարանային աշխատողներն ու գրադարաններից օգտվողները պարտավոր են ծանոթանալ օրենսդրական և անհրաժեշտ այլ փաստաթղթերին, մասնագիտական գրականությանը: Ի դեպ, եթե ոչ ուշացած, ապա ժամանակն է գրադարանագիտական, մատենագիտական և գրքագիտական առարկաներից կամընտրական կարգով ընդգրկել դպրոցական ուսուցման ծրագրերում: Հիմնախնդիրների լուծումներում և գործնական զարգացումներում լավագույն հաջողությունների հասնելու համար ոչ պակաս

կարևոր նշանակություն ունեն նաև գրադարանների, թանգարանների, մատենադարանների, արխիվների և մասնագիտական (բուհական) հաստատությունների միջև համագործակցության հաստատումն ու խորացումը, ոլորտների աշխատողների վերարտակավորման դասընթացների կազմակերպումը:

. Հայաստանում գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթության ու գիտության զարգացման գործում, անշուշտ, մեծ է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ում 1970 թ. ի վեր գործող «Գրադարանագիտության և մատենագիտության» ամբիոնի դերը, որի միայն 2001-2014 թթ. գործունեության վերաբերյալ կարելի է համառոտ ասել հետևյալը.

- հստակեցվել են ապագային միտված ամբիոնի զարգացման ուղղությունները, որոնք են՝ *գրադարանագիտություն, մատենագիտություն, գրքագիտություն* և *փաստաթղթագիտություն;*
- կրթական նորագույն չափորոշիչների հիման վրա կազմվել ու հրատարակվել են բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի, ինչպես նաև գրադարանային-տեղեկատվական ոլորտի մասնագետների վերապատրաստման ուսումնական դասընթացի շուրջ քառասուն առարկայական ծրագրեր (2005, 2010, 2011), որոնք արժանացել են մասնագետների բարձր գնահատականին*;*
- ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել և անց է կացվել չորս գիտաժողով (2002, 2005, 2010 և 2014 թթ.), որոնց քննարկումներում ակտիվ մասնակցություն են ցուցաբերել գիտության, կրթության և մշակույթի բազմաթիվ ներկայացուցիչներ;
- հրատարակվել են գիտամեթոդական և պատմատեսական բնույթի տասնյակ հոդվածներ և ուսումնական նոր գրականություն, այդ թվում՝ «Փաստաթղթագիտություն և փաստաթղթային-տեղեկատվական աղբյուրներ» (2009), «Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն» (2013), «Երուսաղեմի հայ տպագիր գրքի մատենագիտություն. 1833-1996 թթ.» (2012), «Արխիվագիտություն» (2013), «Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական աշխատությունների մատենագիտություն. 1940-1990 թթ.» (2012) և այլն: Նախատեսվում է հրատարակելու «Հայ նոր գրադարանագիտություն և մատենագիտություն» ուսումնական ձեռնարկը:

. Համաժողովում քննարկվող թեմատիկ ուղղություններում՝ շաղկապված հայկական գաղթօջախների և օտարերկրյա գրադարանային-տեղեկատվական կենտրոններում եղած հայ հնատիպ, հայագիտական և հայոց ցեղասպանության

վերաբերյալ գրականության (ներառյալ պարբերական մամուլի) ձեռքբերման, «էլեկտրոնային շտեմարաններ» ստեղծելու և դրանց ֆիզիկական ու բովանդակային լիարժեքությունը ապահովելու հարցերի հետ անհրաժեշտ է լուրջ աշխատանք տանել վերջին տասնամյակներում պատերազմների պատճառներով և աղետների հետևանքով կործանված գրադարանների (իսկ դրանց թիվը փոքր չէ), այրված կամ թալանված գրքերի քանակի ճշգրտման մասին, առանց որոնց հնարավոր չէ նոր լույս սփռել առաջադիր խնդիրների լուծման վրա: Մասնավորապես **հայոց ցեղասպանության և հայագիտական գրականության հիմքի վրա ստեղծվող ավանդական կամ էլեկտրոնային տեղեկատվական ֆոնդեր ստեղծելու նպատակով, առաջարկվում է ներառել նաև մինչ այսօր շրջանցված հայալեզու և օտարալեզու ռադիոհեռուստատեսային հաղորդումների նյութերը. դժվարին, բայց նոր գործընթաց բացելով ժամանակակից գրադարանային գործում և մատենագիտության մեջ**:

Խորապես համոզված ենք, որ հայկական գրադարանների հեռանկարային զարգացումները գերազանցապես կախված են գիտության և պրակտիկայի փոխադարձ կապերից, մեթոդաբանական համակողմանի մոտեցման սկզբունքներից, գրադարանային-տեղեկատվական և մատենագիտական բարձրագույն կրթությամբ մասնագետներին փաստաթղթային-տեղեկատվական համակարգերում ներգրավելու մշակութային քաղաքականությունից: Գրադարանները տվյալ երկրի գիտական մտքի զարգացման և ուսումնական գործընթացի կազմակերպման տեղեկատվական ռեսուրսների հիմքերն են, գրավոր հուշարձանների կուտակման և պատմական հիշողության կենտրոնները, որոնց պահպանումը, զարգացումն ու գնահատումը յուրաքանչյուր գրադարանավար-մատենագետի պարտականությունն է:

Դիտարկվող հիմնահարցերի և առաջարկությունների կարևորման տեսանկյունից ներկա համաժողովը որքան պարտավորեցնող, նույնքան ուրախացնող եզակի իրադարձություն է: